

**ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԱՔՈՒ-ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ» ԵՎ
ՌԱԶՄԻԿ ԴԱՎՈՅԱՆԻ «ՀԵՔԻԱԹ
ՄՂՁԱՎԱՆՋՆԵՐՈՎ» ՊՈԵՄՆԵՐԸ**

Բանալի բառեր - անախորետ, աշխարհաթողություն, հոգևոր ազատություն, անապատ, երկինք:

Ամփոփում

Այս հոդվածը նվիրված է Ավետիք Իսահակյանի «Աքու-Լալա Մահարի» և Ռազմիկ Դավոյանի «Հեքիաթ մղձավանջներով» պոեմների համեմատական ուսումնասիրությանը: Հոդվածը ցույց է տալիս, որ չնայած ստեղծագործական տարբեր ժամանակաշրջաններին և ոճային մոտեցումներին, երկու պոեմներն ունեն ընդհանուր գաղափարական առանցք՝ անհատի, այս դեպքում՝ բանաստեղծի ներաշխարհը, մենության, կեղծավոր հասարակությունից հեռացման ծագումը և հասարակության արատների գիտակցումը: Իսահակյանի հերոսը ներկայացվում է արևելյան բանաստեղծական ավանդույթում՝ միագիծ՝ մնալով թեմայի տիրույթում, մինչդեռ Դավոյանի քնարական հերոսը տեղափոխվում է ժամանակակից, մոդեռնիստական աշխարհ և երբեմն երգիծական դաշտ՝ ընդգրկելով նաև ազգային, սոցիալական և բանաստեղծական հարցեր: Բառապատկերային և նշանագիտական համեմատությունը վկայում է գրական ազդեցությունների մասին, իսկ Դավոյանի պոեմը միաժամանակ նորովի զարգացնում է թեման՝ ներառելով ժամանակակից իրականության խնդիրներ և վերացարկված խորհրդանիշներ: Հոդվածը վերլուծում է հայ գրականության մեջ անհատի և աշխարհի, ներքին և արտաքին միջավայրի փոխհարաբերությունը, ինչպես նաև գրական ավանդույթի արդիական վերաճակերպումը:

GOHAR OHANJANYAN

Master's student

Yerevan State University

Gohar.ohandzhanyan1@edu.y-su.am

**THE POEMS “ABU-LALA MAHARI” BY AVETIK
ISAHAKYAN AND “A TALE WITH NIGHTMARES” BY
RAZMIK DAVOYAN**

Key words: anchorite, alienation, spiritual freedom, desert, sky.

Abstract

This article is devoted to a comparative study of Avetik Isahakyan's "Abu-Lala Mahari" and Razmik Davoyan's "A Tale with Nightmares". The article demonstrates that, despite differences in creative periods and stylistic approaches, both poems share a common ideological core: the poet's inner world, the pursuit of solitude, withdrawal from a hypocritical society, and awareness of societal flaws. Isahakyan's hero is presented within the Eastern poetic tradition in a linear manner, remaining firmly within the thematic scope, whereas Davoyan's lyrical hero moves into a contemporary, modernist, and sometimes satirical realm, addressing national, social, and poetic issues as well. The lexical, imagistic, and semiotic comparison indicates literary influences, while Davoyan's poem simultaneously develops the theme in a new way by incorporating contemporary social issues and abstract symbols. The article highlights the expression of the relationship between the individual and the world, the inner and outer environment, in Armenian literature, as well as the modern reinterpretation of literary tradition.

ГОАР ОГАНДЖАНЫАН

Магистрант

Ереванский государственный университет

Gohar.ohandzhanyan1@edu.ysu.am

ПОЭМЫ «АБУ-ЛАЛА МААРИ» АВЕТИКА ИСААКЯНА И «СКАЗКА С КОШМАРАМИ» РАЗМИКА ДАВОЯНА

Ключевые слова: анахорет, отчуждение, духовная свобода, пустыня, небо.

Аннотация

Эта статья посвящена сравнительному исследованию поэм Аветика Исаакяна «Абу-Лала Махари» и Размика Давояна «Сказка с кошмарами». В статье показано, что, несмотря на различия в творческих периодах и стилистических подходах, обе поэмы имеют общую идеологическую основу: внутренний мир поэта, стремление к уединению, уход от лицемерного общества и осознание его пороков. Герой Исаакяна представлен в рамках восточной поэтической традиции линейно, оставаясь в пределах темы, тогда как лирический герой Давояна переносится в современный, модернистский и иногда сатирический контекст, затрагивая также национальные, социальные и поэтические вопросы. Лексико-образный и семиотический анализ свидетельствует о литературных влияниях, при этом поэма Давояна одновременно развивает тему по-новому, включая актуальные социальные проблемы и абстрактные символы. Статья подчеркивает выражение отношений между личностью и миром, внутренней и внешней средой в армянской литературе, а также современную переосмысленность литературной традиции.

Ներածություն

Ավետիք Իսահակյանը հայ նոր գրականության այն դասականներից է, ովքեր մեծ ազդեցություն են թողել իրենց ժամանակի, հաջորդող հեղինակների և առհասարակ հայ գրականության հետագա ընթացքի վրա: Ազդեցությունների առումով ինքն էլ հայ և համաշ-

խարհային գրականության ավանդույթների կրողն է եղել՝ գերմանացի փիլիսոփաներից մինչև Արևելքի բանաստեղծներ: Նրա ստեղծագործություններն արդեն մեկ դարից ավելի է՝ վերլուծվում են, սակայն շարունակում են մնալ արդիական և հետաքրքրել ժամանակակից ընթերցողին և գրականագետին: Մեր այս հոդվածը, որը նվիրված է Իսահակյանի ծննդյան 150-ամյակին (հրաշալի պատահականությամբ դրան զուգահեռվել է նաև հոդվածի ուսումնասիրության առարկա երկրորդ հեղինակի՝ Ռազմիկ Դավոյանի ութսունհինգամյակը) թույլ կտա բացահայտել հենց այն ազդեցությունների դաշտը, որ գուցեև ենթագիտակցորեն կրել է Ռազմիկ Դավոյանը՝ քսաներորդ դարի երկրորդ կեսի հայ գրականության ամենաարդիական և տաղանդավոր բանաստեղծներից մեկը:

Անախորետը կամ աշխարհաթողությունը

Նախքան պոեմների զուգադրական ուսումնասիրությունն սկսելը հարկ է կարճ ակնարկով ներկայացնել, թե ինչ է անախորետը, աշխարհաթողությունը, և ինչ դրսևորումներ է ունենում գրականության մեջ: *Անախորետ* բառը ծագել է հունարեն αναχωρετέες (anachōrētes-հեռացում) բառից (Հայրապետյան, 2011: 41): Ռուս իրականության մեջ այդ բառով ներկայացվում են անապատակյաց, ճգնակյաց մարդիկ: Հոգեբուժության մեջ այն նաև ախտանիշ է (симптом Анахоретство), որն առաջանում է ընկճախտային, շիզոֆրենիայի խանգարումների ժամանակ: Իհարկե, երբ խոսում ենք գրականության մասին, եզրույթի այս կիրառությունը երկրորդ պլան է մղվում, որովհետև եթե կան ստեղծագործություններ, որոնց տեքստերում Զ. Ֆրոյդի հոգեվերլուծության մեթոդով կարելի է հստակ մատնանշել կերպարի նմանատիպ հոգեկան խանգարումները, ինչպես, օրինակ՝ Հ. Հեսսեի «Տափաստանի գայլը» վեպում, ապա շատ ստեղծագործություններում այս բառը պահում է իր առաջնային իմաստը միայն, այն է՝ աշխարհից, հասարակությունից, մարդուն բնորոշ կենսական միջավայրից հեռանալը դեպի անապատ, հեռաստան, մի վայր, որտեղ հերոսը միայնակ է մնում իր մտքերի և ճակատագրի հետ: Առհասարակ, այս երևույթի սկիզբը կապված է քրիստոնեության տարածման և հեթանոսական խրախճանքներից հեռանալու հետ, երբ

հատկապես քրիստոնյա հայրերը առանձնանում էին, և ժամանակի ընթացքում նրանց շուրջը խմբվում էին երիտասարդներ ու սկսում զբաղվել հոգևոր կրթությամբ: Այդ ճգնակեցության սկզբնավորողներից մեկն է ծագումով եգիպտացի Անտոն Մեծը, որը Հայ Առաքելական Եկեղեցու տոնելի սրբերից է: Հայ իրականության մեջ «անախորետ» հասկացությունն այնքան էլ գործածական չէ. նման կերպարներին բնութագրելու համար կիրառում ենք «աշխարհաթող» բառը:

Համաշխարհային գրականության մեջ աշխարհաթող կերպարներ ունեցող ստեղծագործությունները թեմատիկ և դիպաշարային տարբեր դրսևորումներ են ստացել: Որոշ գործերում հերոսները պատահաբար, հանգամանքների բերումով են հեռանում աշխարհից և ենթարկվում կենցաղավարական ու հոգեբանական ամենատարբեր փորձությունների: Օրինակ՝ Դանիել Դեֆոյի «Ռոբիզոն Կրուզո», Գյոթեի «Ֆաուստ», Լերմոնտովի «Դևը» և այլ երկերում աշխարհաթողությունը կրում է փիլիսոփայական, երբեմն հոգևոր խոր ենթատեքստ:

«Աբու-Լալա Մահարի» պոեմը և «Հեքիաթ մղձավանջներով» պոեմ-շարքը

Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» և Ռ. Դավոյանի «Հեքիաթ մղձավանջներով» պոեմները երկու տարբեր շրջանների (նոր և նորագույն), բայց թեմատիկ առումով նույն տիրույթին պատկանող ստեղծագործություններ են: Երկու հեղինակներն էլ իրենց ստեղծագործությունների միջոցով անդրադառնում են աշխարհաթողության, «հոգու սով» ասվածից առաջացած հիասթափության թեմային: Ավ. Իսահակյանն այն ներկայացնում է արևելյան ոճով՝ ընտրելով միջնադարյան արաբ հեղինակին՝ իբրև քնարական հերոսի, իսկ Ռ. Դավոյանը խոսում է ժամանակակից մարդու դիրքերից:

Այս երկու պոեմների համեմատական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու ոչ միայն նրանց թեմատիկ ու գեղարվեստական ընդհանրությունները, այլև անհատի և աշխարհի հարաբերակցության ընկալման զարգացումը հայ գրականության մեջ: «Աշխարհաթողությունը»՝ որպես հոգևոր-փիլիսոփայական հենք, առանցքային հասկացություն է երկու պոեմների համար, նրանց մի-

ջով անցնող գաղափարական գիծ: Սակայն եթե «Աբու-Լալա Մահարի» պոեմում այն միագիծ է, հերոսը հեռանում է, որպեսզի ազատվի իրեն տանջող ու կեղեքող միջավայրից, ապա Դավոյանի պոեմը խիստ մոդեռնիստական է, և հերոսի հիասթափությունն ու հեռացումը արժարժվող խնդիրներից մեկն է, որ շրջափուլային ձևով առաջ է գալիս՝ դառնալով գլխավոր թեմա, և ետ մղվում՝ զիջելով այլ հարցերի:

«Աբու-Լալա Մահարի» պոեմի մասին շատ է գրվել: Այն արդիական է եղել հարյուր տարի առաջ, արդիական է և այժմ: Հայտնի է, որ Ավ. Իսահակյանի պոեմի հերոսի նախատիպը 10-11-րդ դարերի արաբ բանաստեղծ Աբու-լ-Ալա ալ-Մահարին է: Նախատիպի վերաբերյալ Իսահակյանի պոեմի շուրջ տարբեր կարծիքներ կան, սակայն ամենաճիշտը, թերևս, այն է, որ քնարական հերոսը հեղինակի՝ Իսահակյանի և արաբ բանաստեղծի համադրումն է: ««Աբու-Լալա Մահարի» պոեմի մեջ երկփեղկված են և՛ Աբու-լ-Ալա Ալ-Մահարին, և՛ Ավետիք Իսահակյանը» - գրում է Ավիկ Իսահակյանը ««Աբու-Լալա Մահարի» պոեմի հերոսը և հեղինակը» հոդվածում (Իսահակյան Ավ., 2007: 141):

Ռ. Դավոյանի պոեմում քնարական հերոսը հենց ինքը բանաստեղծն է, որն առաջին դեմքով ներկայացնում է իր ասելիքը ընթերցողին: Նա իր պոեմին տվել է օքսիմորոնային վերնագիր՝ «Հեքիաթ մղձավանջներով», որում արդեն իսկ երևում է պոեմում առկա հակադրության գաղափարը: Հակադրվում են երկու իրականություններ՝ կյանքը, այսինքն՝ մղձավանջը, և բանաստեղծի երևակայական աշխարհը՝ հեքիաթը:

«Աբու-Լալա Մահարի»-ն կառուցված է ոչ թե ռոմանտիկական երկերին բնորոշ ավանդական հերոսի պայքարի, այլ ներքին խոհերի և աշխարհից կամաց-կամաց հեռանալու, աշխարհաթողության գաղափարի վրա: Աբու-Լալա Մահարին դեպի անհայտն ու անապատն էր գնում, դեպի արևը. «Գնա մենավոր վայրերը թափուր, ազատ, կույս և սուրբ զմրուխտյա հեռուն, // Դեպի արևը սլացիր անդուլ, և սիրտս այրիի արևի սրտում» (Իսահակյան, 1980: 141):

Անժելա Խորենյանը այսպես է բնութագրում պոեմի գլխավոր հարցադրումը. «...Հզոր անհատը, կրելով իր ներսում մարդկային հա-

սարակության ողջ արատների գիտակցման բեռը, փորձում է ազատվել դրանից՝ մեկուսանալով, որ, սակայն իբրև աշխարհաճանաչողության ընդհանուր արդյունք՝ անհատի գիտակցումն է՝ հոգու և մտքի ազատության ընկալումով...» (Խորենյան, 2016: 48): Իսկապես, պոեմում հերոսի աշխարհաթողությունն արժևորվում է ազատության գիտակցման և վերագտնման ճանապարհով: Այս առումով ևս պատահական չէ որպես խորհրդանիշ ընտրված հենց անապատը, որը գրական երկերում հաճախ դրսևորվում է իբրև փորձությունների ենթարկվելու, ազատության, հասարակությանը հակադրվելու փոխաբերություն (հիշենք, թե Աստվածաշնչում ինչպես է Հիսուսը փորձությունների ենթարկվում հենց անապատում): Դավոյանի պոեմի քնարական հերոսը նույնպես հեռանում է, բայց ոչ անապատ. «Ես մի քիչ էլ քայլեմ այսպես, // մինչև ձյունի սահմանն անցնեմ» (Դավոյան, 1980: 134): Անապատ-երկինք, արև-ձյուն եզրերին հանդիպում ենք երկու բանաստեղծների պոեմների նշանագիտական տիրույթում: Դրանք, ըստ էության, նույնանում են հեռացման նպատակի և պատճառի դաշտում, պարզապես Դավոյանի հերոսն ավելի վերացական, երևակայական դաշտում է գտնվում՝ ի տարբերություն Աբու-Լալա Մահարու:

Պոեմների նշանագիտական դաշտը

Գրական առնչության գուցե ենթագիտակցական իրողությունը հատկապես դիտելի է պատկերային և նշանագիտական դաշտում: Դավոյանի պոեմում հաճախ պատկերն այլ իմաստ է ստանում: Գիտենք, որ շան կերպարը Իսահակյանի համար հավատարմության կրողն էր: «Համբերանքի չիբուխը» պատմվածքում, «Աբու-Լալա Մահարի» պոեմում նա մարդու բնազդային որակներին հակադրում է շան «ավելի մարդկային» բնույթը. «Ծանոթ շները չեն հաչում վրադ, ծանոթ մարդիկ են հաչում քո վրա» (Իսահակյան, 1980: 124),- գրում է Իսահակյանը պոեմի չորրորդ սուրահում: Դավոյանի պոեմում քննադատական նրբերանգով է հանդես գալիս նաև շան պատկերը. «...Կհաչի շունն այդպես մի քիչ // և մեզ վրա կհարձակվի»: Պատկերն այսպես է մեկնաբանում Դավոյանը հենց «Մղձավանջ 1»-ում (Դավոյան, 1980: 124): Քննադատական պատկերները գրեթե նույնանում են ընկեր-բարեկամ, կին-սեր զուգահեռներում. երկու հեղինակներն էլ

խստորեն քննադատում են մարդկային կեղծ բարքերը և երեսպաշտությունը. «Իմ խոր վերքերը ո՞վ կնյութեր ինձ, թե չլիներ ընկեր, բարեկամ. // Որոնք համբույրով սիրտս բացեցին, որոնք համբույրով խայթեցին նրան», «Ի՞նչ է ընկերը և բարեկամը՝ նենգ ու դրուժան, չարական ու վատ» (Իսահակյան, 1980: 124): Դավոյանի պոեմում առկա է այս պատկերը. «Կծոտում են նրանք անվերջ՝ // ամեն գույնի, ամեն համի, // նրանց համար կեր է չքնաղ // հոգին ծանոթ բարեկամի: // Մայր իմ, այո, հեռու մնամ, բայց ինձ այնքան են կծոտել, // որ վերքերս ինչ-որ ձևով// անհնար է կրկին զոդել» (Դավոյան, 1980: 166):

Հատկանշական է նաև անդրադարձը մորը, որը նույնպես իսահակյանական առնչություններ ունի: «Աբու-Լալա Մահարի» պոեմում չի քննադատվում միայն քնարական հերոսի մայրը. «Դու, իմ անմահ մայր, մայրական դու գիրկ, դու միակ բարի, դու միակ սուրբ, սուրբ» (Իսահակյան Ավ., 1980: 131):

Բառ-պատկերային առնչություններն ավելի տեսանելի են դառնում համեմատական աղյուսակում.

«Աբու-Լալա Մահարի»	«Հեքիաթ մղձավանջներով»
1. Աշխարհը ▪ «Մարդկային աշխարհ, արյան բաղանիք», «այս գարշ աշխարհում» (130): 2. Մայրը ▪ «Քո վսեմությամբ հարբեցրու դու ինձ, հարբեցրու ինձ լույս-հիացքներով, // Խավարների դեմ անհաղթ ախոյան, գարունների մայր, ուրախության ծով» (132): 3. Սերը ▪ «այդ քաղցր թույնը...» (118): 4. Կինը ▪ «Եվ կինն ի՞նչ է, որ... խորամանկ խաբող, առնախանձ մի սարդ» (116): 5. Դժոխք ▪ «Իրար կոկորդից պատառ եք հանում և դարձնում աշխարհն՝ ահավոր ջեհնեմ» (121): 6. Մարդու կենդանական էություն.	1. Աշխարհը ▪ «աշխարհը պիղծ և բախտը մեղկ» (182): 2. Մայրը ▪ «...թեև հենց այդ սիրտը, մայր իմ, // կյանք է առնում նույն քո ծայնից», «ծակ գովապիս ծայրից բռնած // դուրս ես քաշում մղձավանջից» (183-184): 3. Սերը ▪ «երջանկության պատկեր ունի, // դժբախտության դառը անուն» (187): 4. Սիրելի էակը ▪ «Ախ, ես երբեք չեի ուզի // բաժին դառնալ քեզ պես մեկին, // սեր գողացող. սիրտ գողացող, // անամոթին, ավազակին...» (187): 5. Դժոխք

սարդ, կարիճ ▪ «Մարդիկ ի՞նչ են որ... դիմակված դևեր, ժանիքներ ունեն, անտես ճիրաններ, // Սմբակներ ունեն և որոճող են և նրանց լեզուն՝ թունավոր սուտեր: //Եվ ո՞վ են մարդիկ... աղվեսների հոտ, եսամոլ անհուն, ուրացող, մատնիչ, // Անկումիդ ուրախ, արյուններ լակող, գազան մանկասպան, և դահիճ, դահիճ» , «Եվ կինն ի՞նչ է որ... խորամանկ, խաբող, առնախանձ մի սարդ...» (116):	▪ «այդպիսի պիղծ, թունոտ տանջանք // չկար անգամ հին գեհե՛նում» (192): 6. Մարդու կենդանական էություն. սարդ, կարիճ ▪ «Կայեններն են շրջում հպարտ, // սարդ է նստած նրանց հոգուն, // և սարդի մեջ կարիճն կա սև, // որ բողոքի թույն է թքում» (193), «Եվ մենք այնքան հեշտ ենք շնչում// թանձր սարսափը օրերի, // որ թվում է՝ մարդկանց ցեղը // վեր է ածվել սոսկ բոռերի» (177):
---	---

Ահա այստեղ տեսնում ենք մի քանի նշանագիտական առնչություններ, որոնք էլ այս երկու պոեմների համեմատական քննության հիմքն են և փաստում են, որ Դավոյանը զոց գիտեր Իսահակյանի պոեմը և գուցե ինքն էլ չգիտակցելով՝ ազդեցություններ է կրել «Հեքիաթ մղձավանջներով» պոեմը գրելիս:

Սակայն պետք է անպայման ընդգծել, որ Դավոյանի պոեմը հետաքրքիր առանձնահատկություններ ունի. ի տարբերություն Իսահակյանի՝ Դավոյանի պոեմում խիստ ընդգծված է Աստծու գաղափարը: Տրամաբանական է, որ Իսահակյանի պոեմում առկա չէ այս ենթատեքստը, քանզի աշխարհից հիասթափված բանաստեղծն առաջին հերթին քննադատում էր կեղծիքը, որը տիրում էր աշխարհում, սակայն այն, որ նա կյանքը գնահատում էր իբրև չգիտակցված, չհասկացված հրաշք, այնուամենայնիվ ինչ-որ առումով արժևորում էր թե՛ կյանքը, թե՛ այն «բյուր հրաշքներով» ստեղծողին. «Եվ ո՞վ է հյուսել հեքիաթն այս վսեմ, հյուսել աստղերով, բյուր հրաշքներով...» (Իսահակյան 1980: 130):

Այս ենթատեքստում Իսահակյանն արժևորում է նաև բանաստեղծներին՝ ասելով, թե նրանք են դույզն-ինչ ըմբռնել կյանքի իմաստը: Դավոյանի դեպքում, ընդհակառակը, տեսնում ենք բանաստեղծներին ուղղված քննադատություն. «...տանում էին *թխված* երգեր՝ // վերելքների և անկումի», «...ծախում էին ամեն տեսակ // պատմություններ փտած ու հին» (Դավոյան, 1980: 170): Անշուշտ, սա պայմանավորված է ժամանակի գործոնով. Դավոյանի ժամանակ ինքնակոչ

բանաստեղծներն ավելի շատ էին և ավելի շատ էին երևում գրական ասպարեզում:

Նշանագիտական տիրույթում Ռ. Դավոյանի պոեմը խիստ հազեցած է. եթե Ավ. Իսահակյանի պոեմում բնության տարրերը բանաստեղծի հոգեմկիճակը բացահայտող խորհրդանիշներ են, ապա Դավոյանի պոեմում դրանք խիստ վերացարկված են, ինչպես, օրինակ, հետևյալ հատվածում, որտեղ փշատենին դառնում է Հիսուսի անձնավորված խորհրդապատկերը. «Նա քնքշորեն հակվում էր ինձ, // դեմքս էր շոյում տերևներով, // այնքան փափուկ, ասես՝ Որդին // ախտ էր սրբում հրաշք ձեռքով» (Դավոյան 1980: 174): Սակայն Աստծու կերպարն էլ զերծ չի մնացել հեգնանքից. «Արարիչն էլ... խեղճը հիմի // կծկվել է պաղ երկնքում, // արարչի շատ պե՛տքն է, թե // ագռավն այստեղ ինչ է երգում: // Զբաղված է նա երկնքում// անօրինակ բարդ հարցերով՝ հայիոյանքներն իր հասցեին // իրար կողքի դասդասելով (Դավոյան 1980: 181):

Իսահակյանի պոեմում միայն մի ակնարկով ենք տեսնում Աստծուն մերժելու ձգտումը. «Ես կուզեմ լինել անսահման ազատ, անպարտք, անիշխան, այլև *անաստված*» (Իսահակյան, 1980: 122): Այստեղ, իհարկե, ակնհայտ է, որ Իսահակյանի նման գաղափարների արծարծման գործում ահռելի դեր են կատարել այնպիսի փիլիսոփաների ուսմունքները, ինչպիսիք էին Նիցշեն և Շոպենհաուերը, որոնց նա կարդում և հետևում էր կյանքի որոշակի փուլում:

Դավոյանի պոեմում առանձնահատուկ է ազգային թեմայի ընդգծումը, ինչը նույնպես Իսահակյանի երկում չենք տեսնում: Ընդհանուր առմամբ, «<Եքիաթ մղձավանջներով>-ը «Աբու-Լալա Մահարի»-ի պես միագիծ չէ: Դավոյանը մեկ մոտենում է հիասթափության և աշխարհից հեռացման թեմային, մեկ հեռանում՝ գրելով խիստ արդիական թեմաների մասին, և նույնիսկ ոճը հասցնելով երգիծականի. «<Անրախանութ մտա մի օր // սիրո և այլ ապրանքների...» (Դավոյան 1980: 169):

Դավոյանի պոեմում բուն գեղագիտական տիրույթից դուրս, բայց հաճախակի կրկնվող խորհրդապատկեր է «ծակ գուլպան», որը քնարական հերոսի նույնականացմանն է նպաստում. ծակ գուլպան

այն է, որով բանաստեղծը տարբերվում է ուրիշներից, որով նա չի փորձում կեղծել իրեն, այն է, ինչ իրեն է պատկանում մինչև վերջ:

Հետաքրքիր և խիստ տարբերվող ավարտ ունի Դավոյանի պոեմը, որովհետև, ի տարբերություն «Աբու-Լալա Մահարի»-ի, Դավոյանի քնարական հերոսը հավատում է մարդկությանը, հենց մարդուն՝ իբրև խավարում լույս առկայծողի, հավատում է նաև հայրենիքի փրկությանը և այս խոհերը կիսում պատուհանի առաջ նստած իր նմանակի՝ խոհերի մեջ սուզված մարդու հետ, ով, ինչպես հետո պարզվում է, հենց Հայրն է, որ կա, բայց մի տեսակ նման չէ դասական Աստծու կերպարին, այլ ավելի շատ արքայի թատրոնի հերոս լինի ասես «Գողոթին սպասելիս» դրամայից. «Ես ինչ ասեմ, երբ դու // ինքդ ողջը գիտես.— // թե ուզում ես ապրել՝ // պիտի անվեջ ստես» (Դավոյան 1980: 201):

Ի վերջո, աշխարհի ծայրաստիճան հեռացումն իր սկզբնական անաղարտությունից ոչ միայն մարդու, բանաստեղծների, այլև, ըստ Դավոյանի, նաև Աստծու անհանգստության առարկան է դարձել:

Եզրակացություն

Համեմատական ուսումնասիրությունը վերահաստատում է, որ Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» և Ռազմիկ Դավոյանի «Հեքիաթ մղձավանջներով» պոեմները, չնայած ստեղծագործական տարբեր ժամանակաշրջաններին և ոճական յուրահատկություններին, ունեն նույն հիմնական գաղափարական առանցքը՝ աշխարհաթողությունը, ինչպես նաև անհատի հոգևոր, հոգեբանական և սոցիալական հեռացումն աշխարհից: Իսահակյանի քնարական հերոսը ներկայացված է արևելյան բանաստեղծական մոտեցմամբ՝ կենտրոնանալով անհատի ներքին խոհերի, մենության, աշխարհից հեռանալու և տառապանքի միջոցով ազատվելու վրա: Նրա պոեմում անհատի հեռացումը միանշանակ և միագիծ է, իսկ աշխարհաթողության գաղափարը արտացոլում է հոգու ազատության, ներքին մաքրության և հասարակության արատների գիտակցման հոգեբանական խնդիրը:

Դավոյանի դեպքում աշխարհաթողությունը վերածվում է ավելի բազմաշերտ երևույթի. քնարական հերոսը տեղափոխվում է ժամանակակից, մոդեռնիստական, երբեմն նույնիսկ երգիծական դաշտ,

որտեղ ներառվում են ազգային, սոցիալական և հոգեբանական թեմաներ: Դավոյանի պոեմում անհատի հիասթափությունն ու հեռացումը անդրադառնում են ոչ միայն անհատի ներաշխարհին, այլև սոցիալական միջավայրին, բանաստեղծական գործունեությանը, իսկ կյանքի արդիական խնդիրների նկատմամբ քննադատական հայացք ունեն:

Բառ-պատկերային և նշանագիտական դաշտում երկու պոեմների միջև կապը ևս վկայում է գրական ազդեցությունների մասին. Դավոյանը, նույնիսկ եթե ուղղակիորեն չի գիտակցել, ընթերցել է և անդրադարձել Իսահակյանի ստեղծագործությանը: Սակայն նրա պոեմը միաժամանակ նորովի է զարգացնում թեման՝ ներառելով ժամանակակից իրականության խնդիրները, վերացարկված պատկերները, ինչը թույլ է տալիս ընթերցողին տեսնել *հին* և *նոր* գրականության, անհատի և աշխարհի հարաբերակցության շարունակական զարգացումը: Ընդհանուր առմամբ, այս համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս հայ գրականության մեջ անհատի և աշխարհի, մարդու ներսի և արտաքին միջավայրի փոխհարաբերության հարցը, գրական ավանդույթի ժամանակակից վերաձևակերպումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրքեր

1. **Դավոյան Ռ.**, Պոեմներ, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1980, 388 էջ:
2. **Իսահակյան Ավ.**, Երկեր, «Լույս» հրատ., 1980, 356 էջ:
3. **Հայրապետյան Ա.**, Օտար բառերի բառարան, «Նաիրի» հրատ., Երևան, 2011, 644 էջ:

Ամսագրեր

1. **Իսահակյան Ա.**, «Աբու-Լալա Մահարի» պոեմի հերոսը և հեղինակը // Պատմա-բանասիրական հանդես, 2007, թիվ 2, էջ 134-161:
2. **Խորենյան Ա.**, Անհատի և հասարակության հակադրամիասնությունը Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմում // Հայագիտական հանդես, 2016, թիվ 31, էջ 47-53:

REFERENCES

Books

1. **Davoyan R.**, Poemner [Poems], Yerevan, Sovetakan Grogh hrat., 1980, 388 p.
2. **Isahakyan Av.**, Erker [Works], Yerevan, Luyis hrat., 1980, 356 p.
3. **Hayrapetyan A.**, Otari bareri bararan [Dictionary of Foreign Words], Yerevan, Nairi hrat., 2011, 644 p.

Journals

1. **Isahakyan A.**, Abu-Lala Mahari poemi herosy yev heghinakë [The Hero and the Author of the Poem Abu-Lala Mahari], Patma-banasirakan hands [Historical-Philological Journal], 2007, t'iv 2, ej 134–161.
2. **Khorenyan A.**, Anhati yev hasarakut'yan hakadramiansut'yuny Av. Isahakyan Abu-Lala Mahari" poemum [The Dialectical Unity of the Individual and Society in Av. Isahakyan's Poem Abu-Lala Mahari], Hayagitakan handes [Armenological Journal], 2016, t'iv 31, ej 47–53.